«Մաունթին Քընսթրաքշն» ՍՊԸ
21/3 Ն.Ադոնց փող, Երևան, ՀՀ

"Mountain Construction" LLC
21/3 N.Adonts str, Yerevan, RA

06.02.2026թ. N 03

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«ՄԱՈՒՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը 04.03.2025թ.-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել է ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ-ի հանքավայրի Հարավ-Արևելյան տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թիվ ԵՀԹ-29/422 թույլտվությունը:

ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման հիման վրա ընկերությունը պարտավորվել է իրականացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ:

2025 թվականի աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդում անօրգանական փոշու և ծխագազերի կոնցենտրացիա,
- նավթամթերքներով երևակման տարածքի հողերի աղտոտվածության մշտադիտարկում,
- տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է երևակման և հարակից տարածքներում),
- աղմուկի մակարդակ Եղեգնուտ գյուղի մոտ,
- տեղամասին հյուսիսից հարակից տարածքում ջրերի մակարդակ և քիմիական կազմ:

Իրականացված մշտադիտարկումների արդյունքները ներկայացվում են ստորև :

Հարգանքով,

«ՄԱՈՒՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Տնօրեն Է. Մարգարյան

(+374) 10 200 004 mlmining@mail.ru

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Միջին ցուցանիշը	Մշտադիտար-կումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը[1]
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Տեղամասի տարածք	Անօրգանական փոշի (SiO_2 20-70%)	Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	Դաշտային աշխատանքների ընթացքում, շաբաթական մեկ անգամ 24 ժամ տևողությամբ	0.071մգ/մ³
		Ածխածնի օքսիդ			0.8 մգ/մ³
		Ազոտի երկօքսիդ			0.023 մգ/մ³
Հողային ծածկույթ	Տեղամասի տարածք	Նավթամթերք-ների մնացորդներ	Տեղազննում, նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	2025 թվականի ընթացքում, ամսեկան մեկ անգամ	Ալյումին 45118մգ/կգ, սիլիցիում 122933մգ/կգ, ֆոսֆոր <50մգ/կգ, ծծումբ 914մգ/կգ, քլոր 534մգ/կգ, կալիում 10532մգ/կգ, կալցիում 58076մգ/կգ, տիտան 3868մգ/կգ, վանադիում <25մգ/կգ, քրոմ 392մգ/կգ, մանգան

[1] Տեղամասի տարածքում մթնոլորտային օդում փոշու, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները ընդունվել են համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի» կենտրոն ՊՈԱԿ-ի ժամանակավոր առաջարկությունների:

					962մգ/կգ, երկաթ 44159մգ/կգ, նիկել 154մգ/կգ, պղինձ 50մգ/կգ, ցինկ 67մգ/կգ, արսեն 23մգ/կգ, սելեն <5մգ/կգ, ռուբիդիում 39մգ/կգ, ստրոնցիում 347մգ/կգ, իտրիում 23մգ/կգ, ցիրկոնիում 110մգ/կգ, նիոբիում 11մգ/կգ, մոլիբդեն <5մգ/կգ, արծաթ <5մգ/կգ, կադմիում <5մգ/կգ, անագ <5մգ/կգ, ծարիր <5մգ/կգ, վոլֆրամ <5մգ/կգ, սնդիկ <5մգ/կգ, կապար 10մգ/կգ, բիսմութ <5մգ/կգ, թորիում 13մգ/կգ, pH 8.72, էլեկտրական հաղորդականություն 204մկU/սմ, խոնավություն 7.9%: Նավթամթերքներ չեն հայտնաբերվել:

1	2	3	4	5	6
Աղմուկ	Եղեգնուտ գյուղ	Աղմուկի մակարդակ	Չափում ավտոմատ չափիչ սարքերով	2025 թվականի ընթացքում, տարեկան մեկ անգամ	35դԲ
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Տեղամասի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան				
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Տեղամաս և հարակից տարածք	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	2025 թվականի ընթացքում, տարեկան մեկ անգամ	Տեղամասի տարածքում բուսականությունը ներկայացված է աղասեր անապատային բուսատեսակներով: Տարածքում նշվել են գարի մանուշակագույն (Hordeum violaceum), օշան հավամրգանման (Salsola ericoides Bieb.), անցողունիկ հեռացած (Puccinellia distans), սեզ սողացողը (Elytrigia repens), սեզախոտ անապատային (Agropyron

					desertorum), հազարատերևուկ նեղատերև (Achillea tenuifolia), անապատասեզ հեռացած (Eremopyrum distans), դաշտավլուկ սոխուկային (Poa bulbosa), օշինդր բուրավետը(Artemisia fragrans Willd.), լվածաղիկ արծաթատերևը (Tanacetum argyrophyllum C. Koch. Tzvel.), հետերանթելիում մազակիր (Heteranthelium piliferum), փշոտ կապարը (Capparissa) և սովորական եղեգը (Phragmites communis), որն աճում է խոնավ հատվածներում: Կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային-

					անապատային լանդշաֆտներին բնորոշ, հանրապետության տարածքում լայն տարածում ունեցող կենդանական ձևերով: Հարակից շրջանների ջրային տարածքում ճպուռներից դիտարկվել են Agrion splendens, Lestes Barbara և Ischnura elegans, թերթիկաբեղավորներից՝ Scarabeus pius Illiger, Geotrupes stercorarius (Linne), Platytomus variolosus Kolenati, Aphodius subterraneus (Linne) և Onthophagus amyntas (Olivier): Կարածրաթներից նշվել է Mylabris fusca Olivier, Omophlus flavipennis Kuster, Exochomus melanocaphalus (Zubkov): Սողուններից դիտարկվել է

					Ophisops elegans Menetr., Eremias strauchi Kessler., ջրային լորտու (Natrix tessellata): Բազմաթիվ են դաշտամկները (Microtus arvalis):
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ	Տեղամասի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգումը				